

## ԱՐԱՔԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առողջապահության և բժշկագիտության բնագավառում համագործակցության համաձայնագիր է ստորագրվել 2002թ. ապրիլի 20-ին, Աբու Դաբի քաղաքում:

Ստորագրող կողմերն են ՀՀ կառավարությունը և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարությունը:

Համագործակցության շրջանակներն են.

- ուղղակի համագործակցություն բժշկական և գիտահետազոտական ինստիտուտների և հիվանդանոցների միջև,
- իրենց երկրներում կազմակերպվող կոնֆերանսների, համագումարների և նմանատիպ այլ միջոցառումների մասին փոխադարձ տեղեկացում,
- անհետաձգելի վիրաբուժական դեպքերում գործող կարգերի համապատասխան բժշկական օգնություն երկու երկրների քաղաքացիներին՝ հյուրընկալվելիս,
- վճարովի հիմունքներով հիվանդների գործուղումներ ուղեգրերով՝ պլանային բուժօգնության դեպքում,
- համաճարակների դեպքում զբոսաշրջիկները կօգտվեն անվճար բժշկական սպասարկումից,
- քաղաքացիների մահվան դեպքերում ապահովվելու է անվճար դատաբժշկական ծառայություն, դիակի զմրսում և պահպանման այլ ձևեր,
- առաջարկված թեմաներով փորձագետների պատվիրակությունների աշխատանքային այցելություններ:
- տեղեկատվության փոխանակում: